

# ԳԵՏՆԱՄՈՒՇԿՆԵՐ

# LYCOPODIOPHYTA

# ПЛАУНЫ

# LYCOPODIACEAE — ԳԵՏՆԱՄՈՒՇԿԱԶԳԻՆԵՐ —ПЛАУНОВЫЕ

## 320** Lycopodium selago L. — Գետնամուշկ — Плаун баранец




*CR B 1 ab(ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)*

**Կարգավիճակ:** Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հայտնաբերվել է Մրղուզի լեռնաշղթայից 1982 թ.: Հայաստանի ֆլորայի համար հանդիսանում է ոչ միայն նոր տեսակ, այլև նոր ցեղի, նոր ընտանիքի և ընդհանրապես նոր կարգի պատկանող տեսակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ–ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ CITES–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն:** Բազմամյա, մշտադալար խոտաբույս է՝ 5–10 սմ բարձրության: Ցողունները մի փոքր բարձրացող, ուղիղ: Տերևները գծային–նշտարաձև, հերթադիր, պարուրաձև, խիտ դասավորությամբ: Սպորանգիումները տերևների անութներում, մեկական:

**Տարածում:** Հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Մրղուզի լեռնաշղթա): AOO 8 քառ. կմ է, ընկալիչները՝ 1: Համարյա կոսմոպոլիտ է՝ ամենուրեք տարածված բուսատեսակ:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ:** Աճում է միջինից մինչև ենթալպյան գոտի, ծ. մ. 1000–2300 մ բարձրությունների վրա, անտառներում, խոնավ ժայռերի վրա:

**Սահմանափակող գործոններ:** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ:

**Պահպանության միջոցառումներ:** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է կազմակերպել հետազոտական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու համար, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:



© ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիում
© Herbarium of the Institute of Botany of NAS of Armenia

*** Category.** Critically endangered species. It was found in Mrkhuz mountain range in 1982. It was considered not only new species for the flora of Armenia, but also a species that belonged to new genera, new family and new order. The extent of occurrence (EOO) and the area of occupancy (AOO) are less than 10 km$^2$.

It was not included in the first edition of the Red Data Book of Armenia.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.

**Description.** Perennial evergreen herb 5–10 cm. Stems slightly ascending–erect or erect. Leaves spirally arranged, linear–lanceolate, dense. Sporangia solitary, axillary.

**Distribution.** It grows only in Idjevan floristic region (Mrkhuz mountain range). AOO is 8 km$^2$, locations are 2. It is almost cosmopolite — plant that occurs in most parts of the world.

**Ecological, biological and phytocoenological peculiarities.** This species grows from middle up to sub–alpine belt, at the altitude of 1000–2300 meters above sea level, in the forests, in moist rocks.

**Limiting factors.** Restricted extent of occurrence and area of occupancy.

**Conservation actions.** No conservation actions. Necessary: monitoring of the population state, search of new habitats.

*** Սկզբնաղբյուրներ\References**

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր

Herbarium materials of the Institute of botany of NAS RA

Тахтаджян А. Л. 1954. Сем. Lycopodiaceae. Флора Армении, 1: 8. Ереван.

Կազմող՝ Կ. Գ. Թամանյան

Compiler K. G. Tamanyan

* Այստեղ և հետագայում անգլերեն տեքստերը և սկզբնաղբյուրները հաստատված չեն ՀՀ կառավարության որոշմամբ:

** Համապատասխանը տրվել է ըստ «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքի հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29 հունվարի 2010 թ. N 72 որոշման: